

Այն կառավարութիւնն, որ *պայրամի* համար փոխառութիւն ընելու կստիպուի՝ ի՞նչպէս կարող է բարենորոգում մտցունել Հայաստանի մէջ. բարենորոգումն *պայրամներուն* ամենէն մեծն է եւ, հետեւապէս, մեծ ծախքերու կարօտ է, մինչդեռ մենք մեծ աղքատութենէ ուրիշ բան չունինք:

26 Հոկտեմբեր

Կը ցաւիմ, որ *Վայելքին* վրայօք տեղեկութիւն չպիտի կըրնամ տալ. վասն զի մինչեւ այս ժամս պարապ տեղը կյոգնիմ զայն հասկանալու համար:

Չգիտեմ թէ օրիորդները եւ տիկիններն ի՞նչպէս պիտի կարողանան զայն հասկնալ եւ հագուստ ձեւել:

Աստուած կարողութիւն տայ իրենց:

27 Հոկտեմբեր

Հայկական խնդիրը կքնանայ, եւ անկարելի է, որ Գարատաղի խնդրոյն լուծուելէն առաջ արթննայ:

Տեղոյս ազգայիններն՝ Կլատսթօնի բերանէն ելած խօսքերուն մէջ Հայկական խնդիր գտնելու համար, ամեն օր Եւրոպայէն եկած հեռագիրները կկարդան:

Հայ լրագիրներէն մին կ'ըսէ, թէ Եւրոպայէն բարիք յուսալը պարապ բան է, եւ թէ անցեալին մէջ ալ մեր ազգը անկէ բարիք տեսած չէ:

Շատ լաւ. բայց այդ լրագիրն իւր այդ կարծիքն երկու տարի առաջ յայտնելու էր, որ ազգն ալ ըստ այնմ վարուէր... այսինքն Եւրոպայէն օգնութիւն չխնդրէր բնաւ. որովհետեւ անցեալին մէջ անոր մէկ բարիքը վայելած չէ եղեր...

Արդեօք այդ թերթին խմբագիրն բաժանորդ չգրե՞ր այն անձերն, որոնք անցելոյն մէջ իրեն բաժանորդ գրուած չեն:

28 Հոկտեմբեր

Սովելոց Յանձնաժողովը հետեւեալը կը հրատարակէ.

«Ի պաշտօնէ վշտից գուժաբեր՝ ցաւ է մեզ, զի այսօր գուժոց ամենա-ահաւորն կպարտաւորիմք հաղորդել:

«Ըստ հեռագրոյ, սովամահ երեւեցաւ.

Արմտեաց գինն գրեթէ կրկնապատկեցաւ.